ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 28-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 13-Ի ԹԻՎ 17-Լ ՀՐԱՄԱՆԻ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 270-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության պաշտոնի անձնագրերը հաստատելու մասին» թիվ 17-Լ հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածների՝

1) Փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության միջոցառումների նախապատրաստման բաժնի հրահանգիչների փրկարար ծառայության պաշտոնի անձնագրերի 3.1. Կրթություն, որակավորման աստիճանը կետերում լրացնել «Բարձրագույն տեխնիկական կամ մասնագիտական կրթություն» բառերը.

2) Փրկարար ծառայության ներքին վերահսկողության բաժնի հրահանգիչների փրկարար ծառայության պաշտոնի անձնագրերի 3.1. Կրթություն, որակավորման աստիճանը կետերում «Բարձրագույն» բառից հետո լրացնել «իրավաբանական» բառը.

3) Փրկարար ծառայության Արարատի մարզային փրկարարական վարչության Արտաշատի հրշեջ փրկարարական ջոկատի ավագ վարորդի փրկարար ծառայության պաշտոնի անձնագրի 1.1. կետի «Կոտայքի» բառը փոխարինել «Արարատի» բառով, «Հրազդանի» բառը փոխարինել «Արտաշատի» բառով:

2. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

Հաստատված է էլեկտրոնային
ստորագրությամբ
14.08.2023թ.

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ